

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի << Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. բարձրագույն կրթությունը,
3. ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
6. աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2019թ. մայիսի 29-ից մինչև հունիսի 27-ը ներառյալ, ամեն օր ժամը 10⁰⁰-ից մինչև 15⁰⁰-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոցում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի հուլիսի 9-ին, ժամը 15⁰⁰-ին՝

Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ գ. Աղավնատուն , Շահումյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել 093-20-50-70 հեռախոսահամարով:

ՀՀ Արմավիրի մարզի

<< Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան

միջնակարգ դպրոց>>

ՊՈԱԿ կառավարման խորհուրդ